ISSN 1829-0469
ISSN 2579-2687

ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅԻ ԱՄՍԱԹԵՐԹ

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա
Yerevan Komitas State Conservatory
Ереванская государственная консерватория им.Комитаса

Լույս է տեսել ISSN 1829-0469 թղթային տարբերակը 2005թ. դեկտեմբերի 25-ից (226)

#10 հոկտեմբեր 2024

ՍԵՄԻՆԱՐ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅՈՒՄ

Արվեստագիտության դոկտոր, ԵՊԿ Երաժշտության տեսության ամբիոնի պրոֆեսոր Սվետլանա Մարգսյանի մասնակցությամբ սեմինարին, ԵՊԿ դասախոսներ, ուսանողներ

3

ՀԱՄԵՐԳ՝ ՆՎԻՐՎԱԾ ԳԵՂՈՒՆԻ ՉԹՉՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 95-ԱՄՅԱԿԻՆ

Գեղունի Չթչյանի տուն են այցելել ու շնորհավորել նրան ԿԳՄՍ նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանը, ԿԳՄՄՆ Ժամանակակից արվեստի վարչության պետ Սվետլանա Սահակյանը, կոմպոզիտորներ՝ Արամ Սաթյանը, Էդմոնդ Մակարյանը, Երաժշտագետ Գոհար Շագոյանը

2

Վիեննայի Երաժշտության և կատարողական Արվեստի համալսարանում կայացավ «Կոմիտաս» միջազգային գիտաժողովը

ԵՊԿ և Գյումրիի մանանաձյուղի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները «Կոմիտաս» միջազգային գիտաժողովին

4

«Պետք է հոգ տանել, որ Կոմիտասն ապրի, որպեսզի հայերը և Հայաստանը շարունակեն լինել կենդանի և կայուն». Կարեն Ամիր Լաթիֆի

4

“Visible Music” Армена-Левона Манасеряна

5

Մեկ կիսամյակ Նորվեգիայի Կրիստիանսանդ քաղաքում

6

ՀԱՄԵՐԳ՝ ՆՎԻՐՎԱԾ ԳԵՂՈՒՆԻ ՉԹՉՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 95-ԱՄՅԱԿԻՆ

1

«Գեղունի Չթչյանի արվեստով հարստացավ խորհրդային երաժշտությունը... Մեր առջև մի կոմպոզիտոր է, որի ստեղծագործություններն արժանի են լայն տարածման».
Արամ Խաչատրյան

Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը տեղի ունեցավ Հայաստանի կոմպոզիտորների միության Հայ ժամանակակից երաժշտության VIII փառատոնի աշնանային համերգաշարը՝ նվիրված ՀՀ ժողովրդական արտիստ, կոմպոզիտոր, մանկավարժ Գեղունի Չթչյանի ծննդյան 95-ամյակին: Փառատոնը կազմակերպվել է ՀԿՄ նախաձեռնությամբ, ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ: Համերգային ծրագիրը վարում էր արվեստագիտության թեկնածու, դոցենտ Նարինե Ավետիսյանը:

Որպես ավանդույթ ներկայանալ վոկալ երաժշտության բացառիկ սիրված նմուշներով սկսվեց կոմպոզիտորի արվեստի լուսաբանումը:

Գեղունի Չթչյանին շատ անգամներ ներկայացրել են որպես «ռոմանսի վարպետի». ինչպես բնութագրում է նրան նվիրված մենագրության հեղինակ, սիրված երաժշտագետ Սուսաննա Բաբկենի Ամանտունին. *«Գեղունին սկսել է ստեղծագործել վաղ, դեռ 10 տարեկանում հրապարակված երգի հեղինակ էր»*:

Նարինե Ավետիսյանն արդարացիորեն նշում է իր ներածական խոսքում. *«Ընդհանուր առմամբ վոկալ ժանրերը՝ երգը, ռոմանսը և խմբերգերը նրա արվեստի ծանրակշիռ մասն են: Այս ժանրերից յուրաքանչյուրը ներկայացված է մեծ բազմազանությամբ՝ գողտրիկ մանկական երգերից մինչև բարդ հոգեբանական ռոմանսներ և վոկալ շարքեր, a capella մանրակերտ խմբերգերից մինչև մեծակտավ ստեղծագործություններ երգչախմբի և նվագախմբի համար, ինչպես օրինակ՝ «Իմ Հայաստան» կանտատը կամ էլ «Մնհայտ զինվորին» պոեմ-ռեքվիեմը: Վոկալ ժանրը դարձավ Գ.Չթչյանի այցեքարտը և, կարծում եմ, բնական էր, որ հոբելյանական համերգը սկսվեց հենց երգերով՝ «Երգ Հիշատակի» (խոսք՝ Յ. Սահակյանի) և «Գարունդ հայերեն է գալու» (խոսք՝ Հ. Սահյանի), ՀՀ արվեստի վաստակավոր արտիստ Մննա Մայիլյանի հրաշալի կատարմամբ»:*

Կոմպոզիտորի ստեղծագործությունը բազմաժանր է՝ երգարվեստից, կամերային գործերից մինչև սիմֆոնիկ կտավներ: Նրա սիմֆոնիկ ցիկլային գործերից հայտնի են և բազմաթիվ անգամներ հնչել են Չայնի և սիմֆոնիկ նվագախմբի Կոնցերտը, հատկապես Ջուլիետտ Գալստյանի կատարմամբ. առաջին անգամ այն հնեց չեխիայից հյուր, հրավիրված դիրիժոր Հայկ Ութուճյանի մեկնաբանմամբ և նրա ալտի, այնուհետև ջութակի և նվագախմբի Կոնցերտները: Հատկապես վերջին տարիներին շատ եռանդուն հնչում են գեղունի Չթչյանի ստեղծագործությունները Շվյցարական ԲԻՄ հրատարակչության աշխատանքի տարածման շնորհիվ: Կոմպոզիտորի արվեստն առանձնակի սիրով կատարվում է աշխարհով մեկ, օրինակ՝ ԱՄՆ-ում տասնյակ օրեր հնչեց նրա Սիմֆոնիան կամերային նվագախմբի համար: Ինչպես նաև գրվել է «Առավոտ» թերթում Նարինե Ավետիսյանի խոսքը.

– Կոմպոզիտորն իր կենսագործունեության ամբողջ ընթացքում եղել է բոլոր երաժշտահասարակական իրադարձությունների կենտրոնում, ինչը բնական է, քանի որ Գ.Չթչյանի անվան հետ է կապված հայ երաժշտության ինքնատիպ էջերից մեկը: Գ.Չթչյանի ստեղծագործությունները դեռևս ուսանողական տարիներից գրավել են խոշոր արվեստագետների ուշադրությունը: Նա ճանաչել և ստեղծագործական շփումներ է ունեցել Արամ Խաչատրյանի, Դմիտրի Շոստակովիչի, Վիլյամ Սարոյանի, Պարույր Սևակի, Միլվա Կապուտիկյանի, Լորիս Ճգնավորյանի և շատ ու շատ արվեստի ականավոր, հանրաճանաչ ներկայացուցիչների հետ: Արամ Խաչատրյանը գրել է. «Գեղունի Չթչյանի արվեստով հարստացավ խորհրդային երաժշտությունը: Վստահորեն կարող եմ ասել, որ մեր առջև մի կոմպոզիտոր է, որի ստեղծագործություններն արժանի են լայն տարածման»: Եվ Վարպետի մարգարեությունը կատարվել է: Գեղունի Հովհաննեսի հեղինակային համերգները կազմակերպվել են Հայաստանում, կամերային և սիմֆոնիկ գործերը հնչել են և մինչ օրս շարունակում են հնչել Ռուսաստանում, ԱՄՆ-ում, Կանադայում, Շվեյցարիայում և այլուր: Հետաքրքիր մի դրվագ կա՝ կապված կոմպոզիտորի համերգային գործունեության հետ: Նախորդ դարի 80-ականներին կազմակերպվել է համերգ, որտեղ կատարվելու էին Գ.Չթչյանի սիմֆոնիկ ստեղծագործությունները՝ Կանտատ, 2 Կոնցերտներ, Սիմֆոնիա: Համերգին մասնակցում էր 4 դիրիժոր: Այդ գործերից յուրաքանչյուր ղեկավարելու էր մեկ դիրիժոր՝ Լորիս Ճգնավորյան, Յուրի Պողոսյան, Գևորգ Մուրադյան, Ռուբեն Սասարյան: Արտաքոց և հետաքրքիր մտահղացում: Ողջույնի խոսքի ժամանակ Ճգնավորյանն ասաց. «Սա փղամարդ դիրիժորների հարգանքի փուրք է հրաշալի կին կոմպոզիտորին»:

Գ. Չթչյանը ոչ միայն տաղանդավոր և ճանաչված կոմպոզիտոր է, նաև մանկավարժ, հասարակական գործիչ: Շարունակում է միտքը Ն. Ջ. Ավետիսյանը.

Նրա հասարակական բեղուն գործունեությունը պայմանավորված է մարդկային և քաղաքացիական բարձր հատկանիշներով: Կոմպոզիտորը եղել է գագնապալի դարաշրջանի իրադարձությունների կենտրոնում:

Երևանի քաղխորհրդի չորս գումարումների պատգամավոր, ՀՀ կանանց խորհրդի նախագահության անդամ, գիտական և գեղարվեստական բազմաթիվ խորհուրդների և կոլեգիաների անդամ է եղել: Բարձր գնահատանքի է արժանացել Չթչյանի նվիրյալ աշխատանքը նաև երաժշտահասարակական դպրոցում՝ ԽՍՀՄ և ՀՀ կոմպոզիտորների միությունում:

Նա շուրջ չորս տասնյակ մրցանակաբաշխությունների դափնեկիր է: Սակայն կոմպոզիտորի համար կան առավել գնահատելի հաղթանակներ, ինչպիսիք են՝ Պ. Չայկովսկու անվան միջազգային մրցույթը, Խորհրդային միության կոմպոզիտորների մրցանակաբաշխությունը, Բեյրութի միջազգային մրցույթը և այլն: Գ.Չթչյանի գնահատանքը արտահայտված է եղել պատվոնշաններով, շնորհակալագրերով և կոչումներով՝ ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀՀ ժողովրդական արտիստ և այլն: Եվ այս հոբելյանական օրերին նույնպես ԿԳՄՍ նախարարության կողմից Գ.Չթչյանին շնորհվեց նախարարության Ոսկե մեդալ: Կոմպոզիտորն իր տարատեսակ գործունեության յուրաքանչյուր ոլորտում մնում է հայ երաժշտությանն անսահմանորեն նվիրված արվեստագետ:

Գ. Չթչյանը սովորել է կոնսերվատորիայում ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր Գրիգոր Եղիազարյանի դասարանում: Եվ 1971-ից մինչև 2021-ը դասավանդել է Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի Երաժշտության տեսության ամբիոնում: Այս տարիների ընթացքում մեծ ներդրում է ունեցել արվեստագետ սերունդների դաստիարակության գործում:

Գ. Ջալինյան, Գ. Չթչյան, Գ. Շագոյան, Գ. Չթչյանի ծննդյան առթիվ. ՀԿՄ երաշխավորությամբ նվիրվեց Ի. Գրիգորյանի կազմած Գ. Չթչյանի Ռոմանսների նոտային ժողովածուն, Հովհաննես Շիրազի խոսքերով, հրատարակությամբ՝ «ԵՊԿ հրատարակչության»՝ հիմնադիր և պատասխանատու խմբագիր՝ Գ.Կ. Շագոյան

Նարինե Ավետիսյանը կոմպոզիտորի հետ

Կոմպոզիտորի հոբելյանական երեկոն

Նյութը պատրաստեց՝
ԳՈՀԱՐ ՇԱԳՈՅԱՆԸ
հարցազրույցը՝ https://www.aravot.am

Մեր պատմագետների ու բանաստեղծների մոտ կոմպլեքս կա՝ մերժել նախամաշտոցյան գրի հավանականությունը

Որքանով որ հասցրել եմ հասկանալ, մեր պատմագետների ու բանաստեղծների մեծ մասի մոտ ինչ-որ կոմպլեքս կա՝ մերժել նախամաշտոցյան գրի հավանականությունը: Այսինքն՝ ամեն կերպ մշուշել Դանիելյան նշանագրերի իսկությունը: Մի կողմից եզրակացնում են, որ Կորյունի հեղինակած «Վարք Մաշտոցի» աշխատությունը Մաշտոցի կյանքի, կոպիտ ասած, սրբագրումն է, իսկ մյուս կողմից՝ թերհավատորեն են մոտենում Դանիելյան նշանագրերի մասին Կորյունի հիշատակմանը: Եթե այդ «սրբագիր» աշխատության մեջ հարկ է եղել հստակ հիշատակելու այդ նշանագրերի մասին, իսկ հետագայում էլ այդ հիշատակումը չի դուրս մղվել, ապա դա արդեն իսկ լուրջ ենթադրությունների տեղիք է տալիս:

Իմ պատկերացմամբ, թե մաշտոցյան գրի ու Դանիելյան նշանագրերի միջև կապի մերժումը, թե առհասարակ Դանիելյան նշանագրերի իսկությունը մերժվել է հիմնականում կրոնի՝ քրիստոնեության քողի տակ: Համեմատական կարգով, եթե չլիներ Տրդատ Գ-ի խոզի տեսք ստանալու ու Լուսավորչի կողմից նրան բուժելու առասպելը, ապա քրիստոնեության ընդունման պահը այդքան ազդեցիկ չէր ընկալվի: Այսինքն, ընդունելով նախամաշտոցյան գրի գոյությունը, կամ Մաշտոցի կողմից այդ նշանագրերի փոխառնելու հանգամանքը՝ կմերժվեր ավանդական այն մոտեցումը, թե հայոց գիրը աստվածաշնորհ է ու ի հայտ է եկել տեսիլքի ձևով: Ուստի և մաշտոցյան գիրը կթերագնահատվեր, իսկ վատագույն դեպքում՝ կներկայացվեր որպես այլ դպրություններից փոխառնված:



Մեպագիր

Կորյունը հստակ է նշում՝ գտնվեցին հայերեն լեզվի ալփաբետներ (նշանագրեր), իսկ հետո «պարզվում է», որ նշանագրերը այլ դպրություններից թաղված ու հարություն էին առած: Այո, այդ նշանագրերից շատերը կարող է և այլ դպրություններից էլ էին փոխառնված, որը շատ բնական էլ է, բայց նրանք, ինչպես հենց Կորյունն է գրում՝ հայերեն լեզվի նշանագրեր էին, ու բնական է, որ նրանք ինչ-որ ժամանակաշրջանում որոշակի կիրառում են ունեցել Հայաստանում, հակառակ դեպքում՝ անհասկանալի կլիներ՝ «թաղված ու հարություն առած» հիշատակումը:

Վրաստանում էլ Մաշտոցի հանդեպ կա կոմպլեքս, ու նրանք էլ, ելնելով իրենց պատմական շահերից, ամեն կերպ փորձում են ապացուցել սեփական գրի գոյությունը՝ նախքան Մաշտոցը: Ու ի տարբերություն մեզ՝ Վրաստանում ամեն կերպ փորձում են իրենց գրի գոյությունը տեղավորել նույնիսկ Ք. Ծ. ա.՝ ընդունելով հետագա խմբագրումները:

Ինչպիսի ծագում, գծապատկերային տեսք ու կիրառում էլ ունեցած լինեն Դանիելյան նշանագրերը, որքանով էլ փոխառնված լինինեն ու լիովին արտահայտած չլինեն հայոց լեզվի հնչյունաբանությունը, անկասկած մեր պատմական շահերից է բխում ընդունել նրանց իսկությունը՝ անտեսելով կրոնական քողերը: Թե չէ մեզ փորձում են համոզել, որ հայ ժողովուրդը III դարում է ձեռք բերել «քարոյականություն», իսկ IV դարում նոր սկսել է մտահոգվել իր ազգային ամենագլխավոր արժեքը հայտնագործելու մասին: Ու դա այն դեպքում, երբ Ք. Ծ. ա. III հազարամյակում արդեն իսկ Հայաստանի մասին պատմական հիշատակումներ կան:

Matsak and Ashot Avakian
Encycliopedia of World History (via Patreon)

ՍԵՄԻՆԱՐ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅՈՒՄ

1 Հոկտեմբերի 17-ին, ԵՊԿ ակուստիկ լաբորատորիայում կայացավ սեմինար՝ արվեստագիտության դոկտոր, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Երաժշտության տեսության ամբիոնի պրոֆեսոր Սվետլանա Սարգսյանի մասնակցությամբ: Սեմինարի առաջին բաժնում պրոֆեսորն հանգամանալի խոսեց երաժշտության և կինոյի, որպես արվեստի առանձին ոլորտների նմանությունների և տարբերությունների մասին: Երկրորդ բաժնում ներկայացրեց «Սերգեյ Փարաջանովի գաղափարների հետագիծը», զեկույցը, որով մինչ այդ հանդես էր եկել սեպտեմբերին, Երևանում, Սերգեյ Փարաջանովի ծննդյան 100-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովում:

Խմբագրական

Արվեստագիտության դոկտոր, ԵՊԿ Երաժշտության տեսության ամբիոնի պրոֆեսոր Սվետլանա Սարգսյանի մասնակցությամբ սեմինարին, ԵՊԿ դասախոսներ, ուսանողներ

Բարսեղ Թումանյանի վարպետության դասը ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղում

2024թ. սեպտեմբերի 26-ին, ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղում տեղի ունեցավ աշխարհահռչակ օպերային երգիչ, ՀՀ ժողովրդական արտիստ Բարսեղ Թումանյանի վարպետության դասը: Արվեստագետի հետ հանդիպումը վաղուց սպասված էր և նրա հետ համագործակցության եզրերը՝ հույժ բաղձալի: Հանդիպումն անցավ բարձր արվեստի և ակադեմիական վոկալ երգեցողության մասնագիտական խնդիրների արծարծման ու ճանաչման բուռն մթնոլորտում՝ ապագա համագործակցության և համատեղ ծրագրերի իրականացման մեծ ակնկալիքներով:

Խմբագրական

Բարսեղ Թումանյան, ԵՊԿ ԳՄ դասախոսներ, ուսանողներ

Բարսեղ Թումանյան

Վիեննայի Երաժշտության և կատարողական Արվեստի համալսարանում կայացավ «Կոմիտաս» միջազգային գիտաժողովը

1

Հոկտեմբերի 7-8-ին Վիեննայի Երաժշտության և կատարողական Արվեստի համալսարանի, Երևանի Կոմիտասի թանգարան-ինստիտուտի և ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի համագործակցությամբ՝ Ավստրիայում Հայաստանի դեսպանության պատվո հովանու ներքո Վիեննայի Երաժշտության և կատարողական Արվեստի համալսարանում կայացավ «Կոմիտաս» միջազգային գիտաժողովը («Կոմիտասի ժառանգությունը պատմական և ժամանակակից հետազոտական տեսանկյուններից»): Մասնակիցները ներկայացնում էին Երևանի, Գյումրիի, Լվովի, Դելիի, Վիեննայի գիտական հաստատությունները, Քեմբրիջի, Գրոնինգենի և Լոս Անջելեսի համալսարանները:

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի և Գյումրիի մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները հանդես եկան հետևյալ զեկուցումներով՝ «Հորինվածքային մեխանիզմները Շիրակի արդի օրորոցային երգերում» (համահեղինակ) (ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղ՝ տնօրեն, արվեստագիտության թեկնածու, դոցենտ Հասմիկ Հարությունյան), «Օսմանյան/թուրքական մշակութային քաղաքականության արտացոլումները XIX-XX դարերի երաժշտական-տեքստային ժողովածուներում. Հորնբոսթել, Կոմիտաս, Բարտոկ» (արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Լիլիթ Երնջակյան), «Գերության արձագանքները. հայկական ժողովրդական երաժշտությունը Առաջին համաշխարհային պատերազմի հայ ռազմագերիների ձայնագրություններում» (արվեստագիտության թեկնածու, դասախոս Լիլիթ Հարությունյան), «Գուսանների արվեստի սինկրետիկ բնութագրերը» (արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Միհր Նավոյան), «Կոմիտասի դերը հայ կանանց կրթության հարցերում» (արվեստագիտության թեկնածու, դոցենտ, երաժշտության պատմության ամբիոնի վարիչ Լուսինե Սահակյան), «Վարընթաց մեղեդիական գծերը հայ երաժշտության մեջ» (արվեստագիտության թեկնածու, դասախոս Տաթևիկ Շախկուլյան): Տաթևիկ Շախկուլյանը մասնակցել է նաև կազմակերպիչ հաստատությունների աշխատանքային սկզբունքների թեմայով կլոր սեղանին և «Պարերգ. ավանդույթ և ժամանակակից կիրառություն» թեմայով աշխատանքներին:

Խմբագրական

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի և Գյումրիի մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները Վիեննայի Միխթարյան միաբանության գրադարանում

«Պետք է հոգ տանել, որ Կոմիտասն ապրի, որպեսզի հայերը և Հայաստանը շարունակեն լինել կենդանի և կայուն». Կարեն Ամիր Լաթիֆի

1

Մեր զրուցակիցը՝ Կարեն Ամիր Լաթիֆին, Ծննդավայրում՝ Իրանում ընտրել էր մաթեմատիկոսի մասնագիտություն, զուգահեռ հաճախելով դաշնամուրի դասերի: Հետո ստացվում է այնպես, որ ավստրիացիները տաղանդավոր պատանի դաշնակահարներ հայտնաբերելու նպատակով ժամանում են Թեհրան: Ընտրվում է 5 դաշնակահար՝ Վիեննայի Ռիչարդ Վագների անվ. կոնսերվատորիայում ուսանելու նպատակով: Բայց Կարենը հստակ որոշում է կայացնում երաժշտի իր կարիերան շարունակելու Կոմիտասի անվան կոնսերվատորիայում: Պատճառը հայկական երաժշտությամբ, մասնավորապես Կոմիտասով նրա տարված լինելն էր:

Ուսանում և ավարտում է Երևանի պետական կոնսերվատորիան, որպես խմբավար (պրոֆեսոր Տիգրան Հեքեքյանի դասարան), զուգահեռ աշխատանքի է հրավիրվում Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոց՝ ղեկավարելու ավագ երգչախումբը: Խմբավարությանը զուգահեռ՝ նրան հետաքրքրում է սիմֆո դիրիժորությունը: Որոշ ժամանակ անց երաժիշտը կանգնում է Հայաստանի ազգային Ֆիլհարմոնիկ նվագախմբի դիրիժորական վահանակի առջև՝ ղեկավարելով Բեթհովենի 5-րդ Սիմֆոնիան: Ի դեպ, այս պատվին Կարենն արժանանում է աշխարհահռչակ դիրիժոր Վասիլի Պետրենկոյի՝ Երևանում նախօրոք 15 երկրի դիրիժորներից ընտրության արդյունքում: Կարենը 2023 թ մասնակցել է Իտալիայում կայացած երիտասարդ դիրիժորների միջազգային մրցույթին՝ արժանանալով 1-ին մրցանակի: Կարեն Ամիր Լաթիֆիին մենք զրույցի հրավիրեցինք Ազգային օպերային թատրոնում վերջերս կայացած Էդգար Հովհաննիսյանի «Անտունի» բալետի պրեմիերայի ավարտից հետո: Իսկ զրույցն ընթացավ բալետի գլխավոր կերպարի՝ Անտունի-Կոմիտասի արվեստի շուրջ: *«Առաջին անգամ Կոմիտասի ստեղծագործությունները լսեցի ձայնագրություններով՝ Կոմիտասի անվան լարային քառյակի կատարմամբ և անմիջապես, ուղիղ ասած, սիրահարվեցի: Կոմիտասի երաժշտության մեջ շատ նմանություններ նկատեցի իրանական երաժշտության հետ, ինչը ինձ շատ հուզեց: Սակայն միաժամանակ ինձ խորապես գրավեց հայկական մեղեդիների թարմությունն ու յուրահատկությունը, որոնք որոշակի փարբերությամբ առանձնանում էին այս տարածաշրջանի ժողովուրդների երաժշտություններից»,* – ասաց մեր զրուցակիցը՝ մանրամասնելով. *«Իրանական և հայկական ժողովրդական երաժշտության մեջ կան բազմաթիվ ընդհանրություններ, թե՛ մեղեդիների ստեղծման առումով, թե՛ լադային կառուցվածքների: Օրինակ՝ իրանական Չարգյահ լադը ամբողջությամբ համընկնում է հայկական հարմոնիկ լադին: Սակայն պետք է փաստել, որ իրանական խմբերգային երաժշտությունը երբեք այնքան զարգացում չի ապրել, որքան հայկականը, գուցե այն պատճառով, որ Իրանում չկար նման անձնավորություն, ինչպիսին Կոմիտասն էր, ով կարող էր խմբերգային երաժշտությունը զարգացնել մինչև այս մակարդակը»:* Զրույցի ընթացքում Կարենը խոստովանեց, որ Կոմիտասի երաժշտության միջոցով է կարողացել խորապես ըմբռնել հայկական մշակույթի իսկությունը և ճանաչել հայերի էությունը Կոմիտասի պատմածով: *«Օրինակ՝ Կոմիտասի երգերում, ինչպես «Ծիրանի ծառը», օգտագործված սիրալիր արտահայտությունները և հասարակ ժողովրդի պատկերավոր ներկայացումները բացահայտում են հնագույն հայ ժողովրդի բնույթը, որոնք երբեմն բացակայում են ժամանակակից հայ հասարակության մեջ: Չնայած հայ ժողովրդի պատմությունը հաճախ համակցվում է մարտունակության հետ, նրանց հիմնական զգացմունքները լի են բարությամբ, գորովանքով և համախմբվածությամբ: Բայց մի դիտարկում. բոլորը գիտեն Կոմիտասի կարևորությունը, բայց ներկայիս սերունդը հաճախ կարծրատիպային ձևով է այդ միտքն արտահայտում: Կոմիտասի մեծությունը երեխաների համար կարծես ակնհայտ չէ: Չնայած նրան երաժշտության դասերին որոշ չափով ուշադրություն է դարձվում, բայց նրանք արտանց չեն գնահատում Կոմիտասին»,* – համոզված է նա: *Կոմիտասի կարևորությունը հասկանալու համար պետք է մի քանի ուղղությամբ նայել նրա անձին և ստեղծագործություններին: Նախ՝ Կոմիտասի կյանքի պատմությունն է: Բոլորս գիտենք, որ մինչև նրան Կարա Մուրզան և Մակար Եկմալյանը նպաստել են հայկական երաժշտության զարգացմանը, սակայն այն ժամանակ կային նաև այլ հայ երաժիշտներ, ովքեր ծնվել էին հենց Հայաստանում և բնականաբար, իրենց մանկությունից ծանոթ էին հայոց լեզվին և մշակույթին: Չէ՞ որ նրանք նույնպես կարող էին շարունակել այդ ճանապարհը: Բայց ի վերջո, Կոմիտասն էր, ով, վերադառնալով հեռավոր վայրերից, կարողացավ բարձրացնել հայկական երաժշտությունը աննախադեպ բարձունքների: Հենց սա է այն կարևոր հարցը, որին քիչ ուշադրություն է դարձվում. ինչո՞ւ Կոմիտասը դարձավ այդ եզակի մարդը, որը կարողացավ: Կոմիտասի ամենամեծ ազդեցությունը եղել է հայ ժողովրդի պատմության, մշակույթի և լեզվի վրա: Իր ստեղծագործությունները ոչ միայն գեղեցիկ հնչյունների գանձարան են, այլև պատմում են այն ամենի մասին, ինչ տեղի է ունեցել հայ ժողովրդի հետ»:* Ինչպես կարող ենք պատվել Կոմիտասին

Կարեն Ամիր Լաթիֆի

և պահպանել նրա ստեղծագործությունները: Երեխաների հետ դասավանդելու և աշխատելու տարիների ընթացքում խմբավարը եկել է այն եզրակացության, որ պետք է դպրոցական տարիքի երեխաների համար առաջարկել ուսուցիչների հետ միասին լսել Կոմիտասի երաժշտությունը, նրանց բացատրել հիմնական գաղափարները, ապա խնդրել երեխաներին ներկայացնել իրենց պատկերացումները և մեկնաբանությունները՝ հիմնված այն երգի վրա, ինչ լսել են: Հետո պետք է պատրաստել բարձրակարգ խմբավարներ և վստահել նրանց՝ ղեկավարելու երգչախմբեր: *«Երաժշտական ստեղծագործությունների կենդանի պահպանումը տեղի է ունենում կենդանի երաժիշտների միջոցով: Եվ որ ամենակարևորն է Կոմիտասի ստեղծագործությունները կենդանի պահելու համար պետք է հոգ տանել, որ Կոմիտասն ապրի, որպեսզի հայերը և Հայաստանը շարունակեն լինել կենդանի և կայուն»* – շեշտեց Կարենը:

ՍԱՄՎԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ

https://www.aravot.am/2024/10/09/1447891/?fbclid=IwY2xjawGZX1hleHRuA2FlbQIxMQABHd1q86ymQ-fRrYPb1usjbnacWKhHSkB-IdTK0CW_d8kpbhMOQ13B02Ly9A_aem_TP4Wx2QHg7J2PxSlAShAhw

“Visible Music” Арлиена–Левона Манасеряна

1

Бывают концерты, после которых возникает желание написать, поделиться размышлениями об интерпретации. И сегодняшний концерт был одним из таких. На сцене великолепного концертного зала им. Арно Бабаджаняна играл выпускник Ереванской консерватории им.Комитаса (класс профессора Сергея Сараджяна, ассистент Анна Аджемян), продолживший совершенствовать свой профессионализм в Льежской Королевской консерватории в Бельгии (класс Этьена Раппа), далее в консерватории Мюнстера (Musikhochschule, класс Гериберта Коха) в Германии – пианист Армен–Левон Манасерян.

Он лауреат международных конкурсов, участник международных фестивалей, выступал с оркестрами, в ансамбле с разными исполнителями, инструментальными составами в Армении, Бельгии, Германии, Франции, Австрии, Испании, Румынии, Болгарии, Греции, Италии, Польше, Мальте, Португалии и других странах. Ныне Манасерян преподает в государственной музыкальной школе в Бергхайме, а также в частной музыкальной школе “Emocio” в Кельне и Бонне (Германия).

Манасерян осуществил записи нескольких CD с известными звукозаписывающими фирмами: KNS Classical (Испания), Navona records (США(. Он автор двух оригинальных проектов: фортепианная программная музыка в сопровождении собственных картин–изображений – “Color of sound” и “Visible music”. В этот вечер армянская публика увидела-услышала второй из названных проектов.

В программе концерта звучали известные классические произведения: 32 вариации Л. Бетховена, “Времена года” П.Чайковского, 7 танцев Комитаса (155–летие которого отмечалось в этом году), “Поэма” А.Хачатуряна и Скерцо №1 си-минор ор. 20 Ф.Шопена, на бис были исполнены Ноктюрн до–диез минор ор. 27 №1 и Прелюдия №4.

Думается Армен–Левон сегодня многих удивил исполнением этой сложной программы. В его интерпретациях царила свобода воли и раскрепощенность мысли. Он нашел интонацию и язык, которым общался с публикой. И он убедил искушенную и требовательную армянскую аудиторию, хотя в зале были и иностранцы, в возможности существования и такого прочтения музыки великих мастеров. Всегда интересно слушать музыканта, выходящего за рамки привычных, традиционных трактовок известных опусов. И сегодня Армен–Левон продемонстрировал нестандартность мышления в исполняемых произведениях. Это было ярко, смело, впечатляюще, что невольно вызывало улыбку удивления и восхищения.

Бетховенские 32 вариации в его исполнении звучали почти строго академично, с налетом романтизма и молодого задора.

Гвоздем программы, бесспорно, стало исполнение “Времен года” П.Чайковского, которое сопровождалось картинами–зарисовками самого пианиста. Этот вечер солист назвал Visible Music. Русская музыка звучала в узнаваемых русских – порою ярких, порою пастельных – каринах–открытках самого пиниста. Наверное, когда сам исполняешь и пишешь под каждую тему пьесы картины, то иначе воспринимаешь исполняемую музыку. (Манасерян прекрасно рисует карандашом, пишет картины. Эти гены передались ему от бабушки Аиды Бояджян – члена Союза художников Армении.) Сегодня его Чайковский неожиданно был очень разным: ярким, дерзким, утонченным, лиричным... Манасерян сегодня “говорил” не только с публикой, но и с самим Чайковским. И это было удивительно, свежо и необычно. В уме звучал вопрос: как бы Чайковский отнесся к такому видению его популярного цикла? Здесь вспомнилась история с “Шестью картинами” Арно Бабаджаняна, когда впервые услышав их в исполнении известной пианистки, лауреата международных конкурсов Светланы Навасардян, он свое произведение в такой интерпретации не воспринял. Но прошли годы, и автор уже сам дарил ее CD с исполнением своих “Шести картин”, говоря, что это “несколько другая, своеобразная трактовка, но тоже очень интересная”.

Также ярко и свежо звучали армянские танцы Комитаса в исполнении молодого пианиста. Не скрою, захотелось и здесь увидеть армянские эскизы к танцам глазами самого пианиста–художника. Кто знает, может в следующий раз не только услышим, но и увидим такую музыкально–визуальную трактовку Семи танцев.

Созданная почти 100 лет назад, завоевавшая популярность, знаменитая "Поэма" А. Хачатуряна прозвучала величественно и одновременно порывисто, с изысканными изгибами армянских мотивов.

Арлиен–Левон Манасерян

Шопен звучал страстно и бурно, волнующе и утонченно, и вновь не всегда привычно традиционно: интерпретация приковывала внимание.

Конечно ноты – это лишь повод для талантливого и думающего музыканта выразить в интерпретации свой внутренний мир, свое отношение ко времени и стилю композитора, при условии совершенного владения всеми техническими средствами. И конечно, здесь невозможно не вспомнить его первого учителя – выпускницу Ленинградской консерватории, профессора Шушаник Оганесовну Бабаян, профессиональные занятия с которой способствовали становлению музыканта и пианиста Армена–Левона Манасеряна.

Всегда приветствуется молодой музыкант, ищущий свою, индивидуальную манеру в сложном огромном мире талантливых исполнителей. Думается Армен–Левон Манасерян сегодня нашел свой исполнительский почерк и стиль. Однако время неумолимо течет, и кто знает, как будут звучать эти же произведения через 5–10 или 15 лет. Однако одно будет неизменно – профессионализм!

САЕНИК МАГАКЯН,
пианистка, профессор ЕГК

ԿՈՄՊՈԶԻՏՈՐԱԿԱՆ ՀԱՅԱՅՔ «ԼԵՀԱԿԱՆ ՍՈՆՈՐԻԶՄԻ ՀԵՏՔԵՐՈՎ» ՀԱՄԵՐԳԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Հոկտեմբերի 26-ին, ՀԲԸՄ դահլիճում համերգով հանդես եկան լեհ երաժիշտներ՝ ֆլեյտահար Էվա Լիբչենը և դաշնակահար Էմիլիա Կարոլինա Սիտաժը:

Համերգը կրում էր «Լեհական սոնորիզմի հետքերով» խորագիրը, որի ծրագրում ընդգրկված էին լեհ ժամանակակից անվանի կոմպոզիտորներ՝ Հենրիկ Միկոլայ Գորեցկու, Սլավոմիր Կուպշյակի և Մացեյ Յաբլոնսկու ստեղծագործությունները:

Համերգի ծրագրում առաջին անգամ հնչեցին նաև ԵՊԿ կոմպոզիցիայի ամբիոնի ուսանողներ՝ Լեոն Պողոսյանի, Էրիկա Մարկոսյանի, Մայքլ Առաքելյանի և Մերի Գրիգորյանի ստեղծագործությունները, որոնք հատուկ գրվել էին այս նախագծի համար:

Մի քանի խոսք կատարողների մասին: Էվա Լիբչենը Լեհաստանի ֆլեյտայի կատարողական արվեստի առաջատար ներկայացուցիչներից մեկն է: Երաժիշտը համագործակցում է արդի երաժշտության ասպարեզում մասնագիտացած անսամբլների հետ: Որպես մենակատար և *«Flute o'clock»* դուետի անդամ, հանրահռչակում է բազմաթիվ լեհ կոմպոզիտորների գործերը, որոնցից շատերը պատվիրվել և գրվել են դուետներ: Երաժիշտը դասեր, դասախոսություններ և շնորհանդեսներ է անցկացնում ֆլեյտայի ընդլայնված տեխնիկայի և ժամանակակից կատարողական պրակտիկայի վերաբերյալ, ինչպես ֆլեյտահարների, այնպես էլ կոմպոզիտորների համար: Էվա Լիբչենն ավարտել է *Accademia Italiana del Flauto*-ն Հռոմում (Իտալիա, 2002-ին), և Երաժշտության ակադեմիան Բիդգոշչում (Լեհաստան, 2005-ին), սովորելով Ռայմոնդ Գիոյի, Ռիկարդո Գիանիի և Յադվիգա Կոտնովսկայի հետ: Մի շարք հանրապետական և միջազգային մրցույթների դափնեկիր է:

Դաշնակահար, *Kwadrofonik* փառատոնի գեղարվեստական ղեկավար և մանկավարժ Էմիլիա Կարոլինա Սիտաժը Հաշմանդամություն ունեցող երեխաների կրթական ծրագրի հեղինակ է, լեհական մշակութային կարևորագույն մրցանակների հաղթող *(Koryfeusz, Paszport Polityki, Fryderyk, Złota Płyta, Folkowy Fonogram Roku):* Ֆլեյտահար Էվա Լիբչենի հետ նա ստեղծել է ժամանակակից երաժշտություն դուետ: 2024-ից իրականացնում են «Լեհական մշակույթի խթանում արտասահմանում» ծրագիրը: Դասախոսում է դաշնամուրային դուետի և նոր երաժշտության կատարման հետ կապված խնդիրների մասին: 2020-ին իրականացրել է «Միացնել դուետը» խորագրով դաշնամուրային դուետի համար ստեղծագործություններ ներկայացնող առցանց հաղորդումների շարք: Հաշմանդամություն ունեցող երեխաների և աուտիզմի սպեկտրի վերաբերյալ իր աշխատանքի շրջանակներում նա պատրաստել և վարել է. երաժշտական սեմինարներ *«Draw the sound», «Music on a fork», «Halo halo here Muranów»:*

Դաշնակահարն ավարտել է Ֆ. Շոպենի երաժշտության համալսարանը (Վարշավա), Ռոստոկի Բարձրագույն երաժշտական դպրոցը՝ դուետի մասնագիտացմամբ: Երկար տարիներ կրթություն է ստացել *Bracha Eden* – Ալեքսանդր Թամիրի դուետի (Իսրայել) դասարանում:

1999-ից ստեղծել է *Lutoslawski Piano Duo* անսամբլը, իսկ 2005-ից՝ *Kwadrofonik* կվարտետը: Համագործակցում է նշանավոր լեհ ֆլեյտահար Եվա Լիբչենի հետ: 2011-ից *Kwadrofonik* ասոցիացիայի հետ իրականացնում է մի շարք նախագծեր Լեհաստանում և արտերկրում, այդ թվում՝ *Kwadrofonik Festival, Liens-Concerts to Sightseeing, Pianokrąg, Free Concert, Kwadrofonik* – արտասահմանյան հնչյուններ: Համերգներով հանդես է եկել բազմաթիվ եվրոպական երկրներում:

Համերգների գաղափարը կայանում է նրանում, որ այս երաժիշտները, ելույթ ունենալով բազմաթիվ երկրներում, պրոպագանդում են լեհական ավանգարդ երաժշտությունը, և դրա հետ մեկտեղ, կատարում տվյալ երկրի կոնսերվատորիայում սովորող ուսանողների ստեղծագործությունները, որոնք գրված են ֆլեյտայի և դաշնամուրի համար: Այս անգամ Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի ուսանող կոմպոզիտորներն իրենց ստեղծագործությունները նվիրել էին լեհ կոմպոզիտորներին:

Լսարանը կամերային էր: Հանդիսատեսի գերակշռող մասը կոնսերվատորիայի ուսանողներ և դասախոսներ էին:

Համերգի բացումն իրականացրեց ԵՊԿ պրոռեկտոր Արամ Հովհաննիսյանը: Նա հանդիսատեսին ներկայացրեց կատարողներին և համերգի ծրագիրը:

Առաջինը հնչեց Հենրիկ Միկոլայ Գորեցկու *«For you, Anne-Lill»* (1986-1990 թթ.) ստեղծագործությունը: Այս ստեղծագործության մեջ վառ արտահայտված էին լեհական ֆոլկլորի տարրերը:

Այնուհետև հնչեց 2-րդ կուրսի ուսանողուհի Էրիկա Մարկոսյանի *«To Hiroshima»* ստեղծագործությունը, որը նվիրված էր Քշիշտոֆ Պենդերեցկուն: Ըստ Էրիկա Մարկոսյանի մեկնաբանման, այս ստեղծագործությունը մարդու կյանքի դժվար փուլերի և դրանց հաղթահարման մասին էր:

Այնուհետև հնչեց 2-րդ կուրսի ուսանողուհի Մերի Գրիգորյանի *«Il mito della vita.* Մինատյուրներ» դաշնամուրի և ֆլեյտայի համար: Այս ստեղծագործությունը կազմված էր 3 մասից: Առաջին մասը կոչվում էր *«De vita felice»,* երկրորդ մասը՝ *«De vita triste»,* երրորդ մասը՝ *«Vita inaspettata»:* Մերի Գրիգորյանի մեկնաբանմամբ այս ստեղծագործությունը նկարագրում է այն, որ կյանքը կարող են տարբեր լինել, և ամեն պահի կարող է տարբեր բաներ կատարվել: Այս ստեղծագործությունը նույնպես Պենդերեցկուն էր նվիրված:

Իսկ հետո կատարվեց Մացեյ Յաբլոնսկու *«On the trail of nocturnal butterflies II»* (2019 թ.) ստեղծագործությունը:

Այնուհետև հնչեց 4-րդ կուրսի ուսանող Լեոն Պողոսյանի *«Exhausted Illusions»* ստեղծագործությունը, որը նվիրված էր Վ. Լյուտոսլավսկուն: Ըստ Լեոն Պողոսյանի մեկնաբանման, այս ստեղծագործության մեջ նա փորձել է ստեղծել հետաքրքիր սինթեզ ժամանակակից երաժշտության արտահայտչամիջոցների և էլեկտրոնային երաժշտության որոշ տարրերի միջև: Հայտնեց նաև որ հնչելու էր ստեղծագործության կարճ տարբերակը:

Այնուհետև հնչեց 2-րդ կուրսի ուսանող Մայքլ Առաքելյանի ստեղծագործությունը, որը նվիրված էր Հենրիկ Գորեցկուն: Ըստ Մայքլ Առաքելյանի մեկնաբանման, այս ստեղծագործության մեջ օգտագործել է հոգևոր երաժշտության մոտիվներ, տարբեր հատվածներ ենթարկել է փոփոխության, ավելացրել է մեղեդի, և ներմուծել հայ ժամանակակից երաժշտության տարրեր՝ ինտուիտիվ մակարդակով:

Համերգը եզրափակվեց Սլավոմիր Կուպշյակի *«Res facta»* (2004) ստեղծագործությամբ:

Բոլոր ստեղծագործություններում օգտագործված էին ժամանակակից երաժշտության արտահայտչամիջոցները: Լայնորեն կիրառված էին դաշնամուրի և ֆլեյտայի նորագույն կատարողական տեխնիկաները: Երաժիշտ-կատարողներն ապահովեցին այս ստեղծագործությունների պրոֆեսիոնալ կատարումը և մեկնաբանումը:

Համերգն արժանացավ հանդիսատեսի ջերմ ընդունելությանը:

ԳԱՅԱՆԵ ՄԽՉՅԱՆ
ԵՊԿ Կոմպոզիցիայի բաժնի 1-ին կուրս,
Ղեկավար՝ ԼՈՒՍԻՆԵ ՍԱՀԱԿՅԱՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 215-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

Խաչատուր Աբովյանի տուն-թանգարանի տնօրեն Արևիկ Ստամբոլցյան, ԵՊՀ դոցենտ Նարինե Դիլբարյան, ԵՊԿ դոցենտ Լիլիթ Եփրեմյան, միջոցառման մասնակիցներ, հյուրեր

Հոկտեմբերի 24-ին, Խաչատուր Աբովյանի տուն-թանգարանում նշվեց մեծ Լուսավորչի ծննդյան 215-ամյակը: Տնօրեն Արևիկ Ստամբոլցյանը ներկայացրեց Խ. Աբովյանի գրաբար բանաստեղծությունների իր կազմած առաջին «Հայրենյա՛ց ծխին...» գրքույկը՝ ԵՊՀ դոցենտ Նարինե Դիլբարյանի աշխարհաբար թարգմանությամբ: Ինչպես նաև ԵՊՀ պրոֆեսոր Ալվարդ Ջիվանյանի «Առակախոսիկ» նախագծի անդրանիկ համարը:

ԵՊԿ Միջառարկայական մասնագիտացման կենտրոնի նախաձեռնությամբ (ղեկավար՝ դոցենտ Լիլիթ Եփրեմյան) օրվա երաժշտական մասն ապահովեցին Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի ուսանողները: Ելույթ ունեցան ակադեմիական երգեցողության (ամբիոնի վարիչ՝ պրոֆեսոր Գ. Գեղամյան), դաշնամուրային (ամբիոնի վարիչ՝ պրոֆեսոր Կ. Օհանյան) և Հայ ավանդական երաժշտության կատարողական արվեստի (ամբիոնի վարիչ՝ Մ. Ոսկանյան) ամբիոնների ուսանողներ. Պավել Հայրիյանը (3-րդ կուրս, ղեկավար՝ դոցենտ Ջ. Նազարյան), Էլեոնորա Հարությունյանը (3-րդ կուրս, ղեկավար՝ դոցենտ Ջ. Նազարյան), Թերեզա Մարկոսյանը (4-րդ կուրս, ղեկավար՝ պրոֆեսոր Ս. Քեչեկ), Զարուհի Մինասյանը (4-րդ կուրս, ղեկավար՝ պրոֆեսոր Զ. Բարսեղյան), Ելենա Թորոսյանը (3-րդ կուրս, ղեկավար՝ պրոֆեսոր Ծ. Հովհաննիսյան):

«Երաժիշտներն արժանացան երախտապարտ ունկնդրի ջերմագին ընդունելության և բուռն ծափահարությունների», - նշել է դոցենտ Լիլիթ Եփրեմյանը:

Խմբագրական

Մեկ կիսամյակ Նորվեգիայի Կրիստիանսանդ քաղաքում
«Էրազմուս+»-ի փոխանակման ծրագրի պատմությունից

1

«Էռասմուս+»-ը ԵՄ կրթության, վերապատրաստման, երիտասարդության և սպորտի ամենամեծ ծրագիրն է: Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան անընդհատ մասնակից է «Անհատների ուսումնական շարժունություն» գործողությանը: ԵՊԿ ուսանողները հնարավորություն են ստանում մեկ կամ երկու կիսամյակ անցկացնել որևէ երկրի համալսարանում:

2012-ից կոնսերվատորիան համագործակցում է Նորվեգիայի Ագդեր համալսարանի հետ: Վերջին տարիներին Եվրոպական որոշ երկրներ, այդ թվում Նորվեգիան, օրենք են ընդունել, ըստ որի ԵՄ անդամ չհանդիսացող երկրների քաղաքացի ուսանողները մեծ տուրքեր և ուսման վարձ պետք է վճարեն այնտեղ սովորելու համար: Էրազմուս-ի փոխանակման ծրագրով մեկնած ուսանողներն արտոնություն են ունենում. ստանում են բարձր կրթաթոշակ, որը ծածկում է բոլոր կենցաղային ծախսերը:

2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակում Ագդեր համալսարանի Գեղեցիկ արվեստների ֆակուլտետի Դասական երաժշտության և Մանկավարժության ինստիտուտում իր կրթությունը շարունակեց 3-րդ կուրսի դաշնակահար Ժաննին Առուշանյանը:

«Մինչև գնալը շատ էի տպտանվում, շատերն էին ասում, որ այնտեղ կրթության մակարդակը ցածր է, ոչինչ չեմ ստանա և կափսոսամ: Կարծում եմ՝ այս միտքը շատերին է «հետ պահում»: Բայց հիմա անգամ զավեշտալի են թվում իմ կասկածները, քանի որ այս փոխանակումը ոչ միայն կրթության, այլ նաև՝ կյանքի մեծ փորձառություն ունենալու հնարավորության մասին է: Մի քանի ամսում ծանոթանում ես բոլորովին այլ մշակույթի ու մարդկանց հետ, և այդ ամենը միանգամից քոնն է դառնում: Շեռք ես բերում հետագայում օգտակար լինելու նոր կապեր, ցավոք, Հայաստանը մի փոքր «մեկուսացված» է Եվրոպայից. մենք՝ ուսանողներս, լավ չենք պատկերացնում մեր օրերի դասական երաժշտության ինդուստրիան, իսկ ավարտելիս կանգնում ենք մի անհասկանալի կետում՝ չիմանալով, թե ինչ անել հետո: Այնտեղ հենց ուսանողական տարիներից սկսում են ավելի հեռուն նայել և լայն պատկերացումներ ունենալ սեփական ապագայի վերաբերյալ: Նրանք լավ երաժիշտներ են կրթում, չնայած, որոշ հարցերում զիջում են մեզ: Օրինակ, մենք ավելի պատրաստված ենք, մեծ նվագացնակ ունենք, քանի որ կա հստակ ծրագիր և պարտավոր ենք առաջնորդվել դրանով: Մի կողմից մեզ համար առաջ մղող ուժ է դառնում մրցակցությունը, «ճնշումը», մյուս կողմից՝ պակասում է այնտեղի ուսանողներին տրվող ազատությունը: Որոշ պահերի զգացի, որ այն իմ վրա դրական ազդեց, հասկացա՝ ունակ եմ շատ բաներ ինքնուրույն հասկանալ, իրականացնել առանց մեկ ուրիշի ասելու, ինչից ավելի ինքնավստահ ես դառնում: Ազատությունը տալիս է հնարավորություն փորձելու միօրինակությունից դուրս նոր հայացք: Դրանք կարող են անհաջող լինել ու երբ ինքդ ես գալիս այն մտքին, որ լավ գաղափար չէր, գիտակցում ես, որ այդպիսի ճանապարհը շատ ավելի համոզիչ է, քան պարզապես միշտ դասախոսների ասածով առաջնորդվելը: Պատասխանատվության մասին պատկերացումները փոխվում են, դառնում ավելի «անձնական», երբ քեզ համար երաշխավորը միայն դու ես և ոչ, օրինակ, դասախոսը: Իհարկե, հաճախ պարզապես ցանկանում էի լսել չոր քննադատություն, զգում էի, որ մի բան այն չէ, բայց դասախոսները ավելի մեղմ էին և այդքան խիստ չէին:

Առանձնակի էին ուսանողների միջև հարաբերությունները: Ամեն շաբաթ կազմակերպվում էին այսպես կոչված «fellestime»-ներ, որ թարգմանաբար նշանակում է «ընկերական ժամ»: Դաշնակահարները դասախոսի հետ հավաքվում էին դահլիճում և ըստ ցանկության կատարում իրենց ծրագրից մեկ գործ մյուսների համար, որը կարող էր մինչև վերջ պատրաստ չլինել: Այդպես ընկերների ներկայությամբ ստեղծվում էր մի ինքնատիպ համերգային միջավայր: Վերջում բոլորն իրենց կարծիքն էին հայտնում, լինում էին քննարկումներ: Սա որոշակի թափանցիկություն էր ստեղծում ուսանողների միջև, զարգացնում էր առողջ քննադատության հմտությունները: Կարևորը՝ այստեղ չկար մրցակցություն, միայն՝ միմյանց աջակցություն:

Նորվեգիայի Ագդեր համալսարանում սովորեցի երկու կարևոր բան. ցանկացած քննադատությունից առաջ պետք է նշել գոնե մեկ լավ բան՝ գովյալ կատարման վերաբերյալ, ինչքան էլ այն անհաջող լինի: Սա նաև սովորեցնում է լսելիս ընկալել նաև դրականը և չկենտրոնանալ միայն վատը «որսալու» վրա: Եվ երկրորդ՝ ցանկացած մարդ կարող է օգտակար մի բան ասել՝ անկախ իր «կոչումից», լինի դասախոս, թե՝ ուսանող: Վերջիվերջո՝ բոլորս էլ երաժիշտ ենք: Երբեմն նույնիսկ ամենապարզ բանը կարող է մտքովդ չանցնել և դիմացինը դա նկատի:

Ուսանողներին հնարավորություն էր տրվում մասնակցել շատ համերգների, հաճախ բեմ բարձրանալ: Երբեք այդքան ինտենսիվորեն համերգների չէի մասնակցել, որքան այնտեղ: Արդյունքում՝ ավելի վստահ եմ բեմում, ընտելացել եմ այդ լարվածությանը, ավելի լավ եմ ճանաչում իմ թույլ և ուժեղ կողմերը: Երբեմն որոշ համերգներին համարյա ունկնդիր չէր լինում, բայց դա էական չէր, որովհետև կատարողի համար համերգը համերգ է: Մեզ մոտ երբեմն չափազանց լուրջ են վերաբերվում համերգներին, սահմանափակվում են հաճախակի ելույթների հնարավորությունները: Կամ էլ պարզապես համերգներ չեն կազմակերպվում:

Իհարկե, դաշնակահարի համար շատ կարևոր են գործիքները: Ինչ էլ ասեն, վստահ եմ, որ մենք պետք է հնարավորություն ունենանք պարապել լավ գործիքներով. նման մակարդակում արդեն աշխատանքի կենտրոնում է ձայնը, գույնը, յուրօրինակ պեդալավորումը, որը հնարավոր չէ պրանալ հին, մաշված և անորակ ռոյալներով: Սա հաճախ է սահմանափակում մեզ՝ կոնսերվատորիայի ուսանողներիս: Դաշնակահար ուսանողների համար կարևոր է նաև պարապելու համար նախատեսված դասարանների առկայությունը: Այնտեղ բոլոր դասարաններն ունեին լավ ռոյալներ՝ Kawai, Yamaha, Steinway, նույնիսկ նոր Bechstein կար: Երանություն էր այդ գործիքներով ժամերով աշխատելը:

Ժաննին Առուշանյանն իր դասախոսի՝ Ագդեր համալսարանի պրոֆեսոր Հելգե Կյեկսհուսի հետ

Իմ ուսումնական փորձառության հակառակ կողմը վերադարձն էր: Կարող են ամիսներ պահանջվել, որպեսզի հետ ինտեգրվես մինչ այդ հարազատ միջավայրին: Որոշ ժամանակ անտվոր են հարազատ կոնսերվատորիայի հին գործիքները, ինտենսիվ դասացուցակը, մարդկանց միջև այլ հարաբերություններն ու փարբերվող մթնոլորտը: Վերադարձից հետո որոշ ժամանակ քեզ «փեղից կտրված» ես զգում և դժվար է նույն տեմպով շարժվել: Շատ ես կարոտում այնտեղի մարդկանց, ընկերներին, նույնիսկ այն տունը, որտեղ ապրում էիր: Սակայն նաև վերարժեորում ես, ամեն ինչին նայում ես այլ տեսակյունից, ինչպես օրինակ մեր դասախոսների նվիրվածությունը, հայ երաժշտության դերն ու հարգությունը, հասկանում ես՝ ինչքան գնահատված է այնտեղ և որքան ենք թերագնահատում այստեղ: Ինքս փորձել եմ հնարավորինս շատ կատարել հայ երաժշտություն, խոսել դրա մասին և լավագույն ձևով ներկայացնել:

Կարծում եմ, որ «Էրազմուս+»-ը հրաշալի հնարավորություն է և մեր ուսանողները պետք է ավելի շատ ձգտեն օգտվել: Հապարտ չե՛ք ափսոսի:

Շատ շնորհակալ եմ իմ կյանքի այս կարճ, բայց շատ կարևոր փուլի համար»:

3-րդ կուրսի դաշնակահար Ժաննին Առուշանյան
Խմբագրական
https://www.facebook.com/YerevanStateConsevatory

«ԵՐԵՎԱՆՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

✧ *«Կոմիտասն այն հիմքն է եղել, որի միջոցով կարելի է մտածել հայկականություն. Կոմիտասի մասին խոսելիս պարտավոր ենք հիշել փիլիսոփա Շահան Բերբերյանին, ով համակարգային է անդրադարձել Կոմիտասին: Իսկ Շավարշ Նարդունին «Կոմիտասի արվեստի փիլիսոփայությունը» ծավալուն հոդվածում դիտարկում է Կոմիտասի երաժշտության արվեստի փիլիսոփայական կողմը»,* – իր հարցազրույցներից մեկում նկատել է փիլիսոփայության ու երաժշտության խորքային շփումներ փնտրող մտածող ԵՊՀ Փիլիսոփայության պատմության, տեսության և տրամաբանության ամբիոնի դոցենտ Դավիթ Մոսինյանը:

Դավիթ Մոսինյան

Միգուցե պատահական չէր, որ կոնսերվատորիայում մեր հյուրն առաջին անգամ ներկայացավ Կոմիտասի ծննդյան օրը՝ սեպտեմբերի 26-ին: Հանդիպումը նախաձեռնել էր Կոմպոզիցիայի ամբիոնի դասախոս Նարինե Միսիթարյանը, ում «XX դարի ավանգարդ երաժշտություն» դասընթացի սահմաններում փիլիսոփա, փիլիսոփայական գիտությունների թեկնածու Դավիթ Մոսինյանը խոսեց «Մտածել երաժշտություն» թեմայի շուրջ:

✧ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Միջառարկայական մասնագիտացման կենտրոնը (ղեկավար՝ դոցենտ Լ. Եփրեմյան) *Do Re Meet* կրթամշակութային ՀԿ-ի (ղեկավար Թ. Օնանյան) հետ համատեղ հոկտեմբերի 2-ին, Գյումրիի ԼՕՖՏ կենտրոնում, «Հիշողության սրճարան» մեծահասակների ակումբի համար կազմակերպել էին համերգային ծրագիր՝ ԵՊԿ 3-րդ կուրսի ակադեմիական երգեցողության բաժնի ուսանող Պավել Հայրիյանի (դոցենտ Ջ. Նազարյանի դասարան) և դաշնամուրային բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի (ղեկավար՝ պրոֆեսոր Ս. Քեչեկ) Թերեզա Մարկոսյանի մասնակցությամբ:

Թերեզա Մարկոսյան, Լիլիթ Եփրեմյան, Պավել Հայրիյան, Արմենուհի Կոջիբրոյան, Թագուհի (Թերեզա) Սարգսյան-Օնանյան

Հնչեցին Վ. Ա. Մոցարտի, Ա. Խաչատրյանի, Ա. Բաբաջանյանի, Յ. Ֆելդմանի, Վ. Կոտոյանի, Կ. Օրբելյանի, Շ. Ազնավուրի և այլ կոմպոզիտորների ստեղծագործություններ: Երաժիշտները արժանացան շնորհակալ ունկնդրի ջերմագին ընդունելությանը և բուռն ծափահարություններին՝ նոր հանդիպումների ակնկալիքով:

✧ *«Erasmus+»* փոխանակման ծրագրով Զագրեբի երաժշտական ակադեմիայում, 2024-2025 ուսումնական տարին իրենց ուսումն են շարունակում ջութակահար Հայկ Մարտիրոսյանը և դաշնակահար Լիլիթ Մարտիրոսյանը: ԵՊԿ ուսանողները Հայրենիքը ներկայացնում են մշակութային տարբեր նախաձեռնություններում: Մասնավորապես ելույթ են ունեցել հոկտեմբերի 7-ին Զագրեբի Շերաթոն հյուրանոցում Խորվաթիայի Հանրապետությունում ՀՀ արտակարգ և լիազոր Դեսպան Ն.Գ. պարոն Աշոտ Հովակիմյանի նախաձեռնությամբ իրականացված ընդունելությանը՝ նվիրված Հայաստանի Հանրապետության Անկախության 33-րդ տարեդարձին, Հայաստանի և Խորվաթիայի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակին: Միջոցառմանը ներկա էին Խորվաթիայի Արտաքին և եվրոպական գործերի նախարարության տնտեսական հարցերի եվ զարգացման համագործակցության գլխավոր տնօրեն Իռենա Ալայբեգը, քաղաքական հարցերով գլխավոր տնօրեն Պետար Միխատովը, Խորվաթիայի ԱԵԳՆ դիվանագետներ, Դուբրովնիկ և Բիոգրադ նա Մորու քաղաքային խորհուրդների նախագահներ, Խորվաթիայում հավատարմագրված մի շարք դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարներ, Խորվաթիայի Խորհրդարանի պատգամավորներ, գիտական, մշակութային, հասարակական շրջանակների, Խորվաթիայի հայ համայնքի ներկայացուցիչներ: Հայաստանի և Խորվաթիայի պետական օրհներգերը կատարվեցին հայտնի խորվաթ օպերային երգիչների փայլուն կատարմամբ և դաշնակահարուհի Էվա Կիրիմայեր-Բիլիչի նվագակցությամբ:

Լիլիթ Մարտիրոսյան, Հայկ Մարտիրոսյան, Էվա Կիրիմայեր-Բիլիչ

Ներկաներին ուղղված ողջույնի իր ելույթում Խորվաթիայում ՀՀ Դեսպան Աշոտ Հովակիմյանն անդրադարձավ ՀՀ արտաքին քաղաքական առաջնահերթություններին, անվտանգային օրակարգային հարցերին, ինչպես նաև հայ-խորվաթական հարաբերությունների զարգացման հեռանկարներին: Պատասխան ուղերձով հանդես եկավ Խորվաթիայի Արտաքին և եվրոպական գործերի նախարարության տնտեսական հարցերի և զարգացման համագործակցության գլխավոր տնօրեն Իռենա Ալայբեգը, որն անդրադարձ կատարեց հայ-խորվաթական պատմական առնչություններին, բարձր գնահատական տվեց Հայաստանի և Խորվաթիայի միջև ակտիվորեն զարգացող հարաբերություններին, իր աջակցությունը հայտնեց Հայաստանի և Եվրոպական Միության միջև համագործակցության ընդլայնմանը:

Ելույթներին հաջորդեց հայկական և խորվաթական երաժշտության գեղեցիկ ծրագիր: Այնուհետև հայր Իվան Բոդրոժիչը և պատմաբան, հայագետ Վինիցիյե Լուպիսը ներկայացրեցին վերջերս Սպլիտում լույս տեսած «Ս. Գրիգոր Նարեկացի, Բան Խրատու Վասն Ուղիղ Հաւատոյ և Մաքուր Վարուց Առաքինութեան» գրքի խորվաթերեն թարգմանությունը, որն անգլերենից կատարեց խորվաթ մեծանուն գրող և թարգմանիչ Մատե Մարասը, որը ևս ներկա էր ընդունելությանը:

Շառլ Ազնավուրի հիշատակին՝ նրա ծննդյան 100-ամյակի կապակցությամբ, երեկոյի ընթացքում հնչեցին աշխարհահռչակ շանսոնյեի երգերը:

Հայաստանի և Խորվաթիայի միջև դիվանագիտական հարաբերությունները հաստատվել են 1994թ.: Հայաստանի համար մշակութային, կրթական առանցքային հարցերի հեռանկարային ուղղություններից մեկն է: 2009 թ. Երևանում ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության և Խորվաթիայի Հանրապետության կառավարությունների միջև մշակույթի, կրթության և գիտության բնագավառներում համագործակցության մասին» փաստաթուղթը: 2023 թ. փետրվարի 8-ին ստորագրվել է ՀՀ ԱԳՆ դիվանագիտական դպրոցի և Խորվաթիայի արտաքին և եվրոպական գործերի նախարարության դիվանագիտական ակադեմիայի միջև դիվանագիտական կրթության և վերապատրաստման ոլորտում համագործակցության վերաբերյալ փաստաթուղթը: 2023 թ. կայացել է Խորվաթիայի խորհրդարանի Խորվաթիա-Հայաստան բարեկամական խմբի ղեկավար Դավոր Իվո Շտիրի գլխավորած պատվիրակության այցը Երևան: Խորվաթիան դեպի Հարավ-արևելյան և Կենտրոնական Եվրոպա տանող կամուրջներից է: Հայաստանի համար գիտատար ուղղությունների՝ արտաքին շուկա դուրսբերումը հեռանկարային ոլորտներից է՝ դրա առաջին դրսևորումներից կարելի է համարել Զագրեբի աստղադիտարանում Երևանի Ֆիզիկայի ինստիտուտի աջակցությամբ ստեղծված Տիեզերական մասնիկների ուսումնասիրման սարքը, այս կերպ մեր գիտական միտքը դուրս է գալիս արտերկիր՝ նոր ներդրումներ ապահովելով: Ի դեպ, Դուբրովնիկ քաղաքի ամենահայտնի Սուրբ Վլասի եկեղեցին կառուցվել է ծագումով հայ Սուրբ հովանավորի պատվին:

✧ Հոկտեմբերի 18-ին, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա այցելեցին Հայաստանում Իտալիայի դեսպանատան ներկայացուցիչները՝ անձամբ պարոն փոխդեսպանը՝ Անդրեա Պեդուտոն, մշակույթի հարցերով հավատարմատարը և պատվարժան հյուրեր:

Համերգից հետո իր շնորհակալական խոսքում ռեկտորի պաշտոնակատար Ծովինար Մովսիսյանը նշեց. *«Մնչափ հուզված եմ այն ամենից, ինչի ականատեսը մենք եղանք. մեր ուսանողների ելույթը փառահեղ էր, ցնցող էր ոչ միայն նրանով, որ իսկապես բարձր պրոֆեսիոնալիզմով հնչեցին իտալերենով դասական օպերաների գոհարներ. մեր ուսանողներն ընթերցեցին իտալական պոեզիայի դասականներին:*

Այս համերգը բացառիկ էր. այն անցկացվեց արտակարգ իրավիճակի, կարելի է ասել ճգնաժամային պայմաններում: Կոնսերվատորիայում ընթացող հիմնանորոգման աշխատանքներին գումարվեցին աննախադեպ հեղեղի աղետալի հետևանքները, որոնք անչափելի վնաս հասցրեցին շենքին, դասասենյակներին, գույքին: Եվ այդ ամենի կողքին, մեկ այլ զուգահեռ իրականությունում, նույն այդ շենքի մեկ այլ հատվածում, որը նույնպես վնասներ է կրել, տեղի ունեցավ այս համերգը, քանի որ այն չէր կարող հետաձգվել, քանի որ այդ մասին վաղօրոք պայմանավորվածություններ էին ձեռք բերվել Իտալիայի դեսպանատան հետ, քանի որ այդ համերգին պատրաստվել, ջանք էին գործադրել մեր նվիրյալ պրոֆեսորները, մեր հրաշալի ուսանողներ, քանի որ իրենք իրենց մասնագիտության տերն են, նրանք այլ կերպ չեն կարող ապրել, դա իրենց կոչումն է: Այսպիսինն են մեր երաժիշտները, մի քիչ խելառ, տարօրինակ, իրենց մասնագիտությունից բացի ոչինչ չընդունող ու չճանաչող: Մեր պրոֆեսորների ինքնանվիրումի այս վառ դրսևորումը լավագույն օրինակ է ուսանողների համար:

Հայաստանում Իտալիայի դեսպանատան ներկայացուցիչները, փոխդեսպան՝ Անդրեա Պեդուտոն, մշակույթի հարցերով հավատարմատարը և պատվարժան հյուրերը ԵՊԿ-ում

Շնորհավորում եմ բոլորին և հայտնում խորին երախտագիտությունս Ակադեմիական երգեցողության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Գայանե Գեղամյանին, պրոֆեսորներ Արնոլդ Քոչարյանին, Սլլա Գալուստյանին, Ղազարոս Սարյանի անվան օպերային ստուդիայի գեղարվեստական ղեկավար Հասմիկ Պապյանին, բոլոր ուսանողներին, կոնցերտմայստերներին: Շնորհակալություն, որ այսպիսի անբարենպաստ, ոչ ստեղծագործական պայմաններում չընկրկեցիք, չհետաձգեցիք ձեր ելույթը՝ բարձր պահելով մեր բուհի հեղինակությունը՝ ապացուցելով ձեր պրոֆեսիոնալիզմն ու նվիրվածությունը ձեր ընտրած մասնագիտությանը:

Հուսամ՝ մեր հաջորդ հանդիպումը կկայանա բարեկարգ ու նորոգված դահլիճում, իսկապես բարձր տրամադրությամբ ու ոգևորությամբ»:

✧ Հոկտեմբերի 24-ին, ԵՊԿ ակուստիկ լաբորատորիայում տեղի ունեցավ ֆրանսահայ դիրիժոր, խմբավար, մանկավարժ Նվարդ Անդրեասյանի դասախոսությունը՝ «Կատարողական արվեստի երևույթների բացահայտումն՝ ըստ Ռենե Դեկարտի, Էդմունդ Հուսսերլի, Սերջու Չելիբիդակեի տեսությունների» թեմայով: Ֆրանսիացի փիլիսոփա Ռենե Դեկարտի *(René Des-cartes, 1595-1650)*, գերմանացի փիլիսոփա, ֆենոմենոլոգիայի հիմնադիր Էդմունդ Հուսսերլի *(Edmund*

8

«ԵՐԵՎԱՆՅԱՆ ՀԱՅՏԱՐԱԲՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

7

Husserl, 1859–1938), ռումինացի դիրիժոր, տեսաբան, մանկավարժ Սերջու Չելիբիդակեի *(Sergui Chelibidache, 1912–1996)* տեսությունները մեկնաբանվեցին տարբեր դարերի ստեղծագործություններից հատվածների միջոցով: Ներկայացվեց, թե ի՞նչ է երևութաբանությունը, ի՞նչ է երաժշտության երևութաբանությունը:

Դասախոսության ընթացքում ներառված էին Յ. Հայդնի, Լ. վ. Բեթհովենի, Ա. Շյոնբերգի, Կ. Դեբյուսիի, Բ. Բարտոկի, Դ. Լիգետտիի, Օ. Մեսիան, Ի. Ստրավինսկու և այլոց գործերը:

Նվարդ Անդրեասյանի դասախոսությունը ԵՊԿ-ում

Դիրիժոր Նվարդ Անդրեասյանի նպատակն է՝ լուծել տեսական և տեխնիկական հարցեր, հնարավորություն տալ չշփոթել ձևերը, ձևաչափերը, տեսակները, որակը և այլն, օգնել՝ հասնել կիրառման/կատարման, լինել իրազեկված մասնագետ:

Մասնակիցներին տրվեցին մասնագիտական անհրաժեշտ գործիքանի. Կոմպոզիտորներին՝ հետազոտելով, նոր մտքեր հղանալով, հստակ լսելով, ստեղծելով տեխնիկական և արտահայտչական նոր միջոցներ, լինելով պահանջող, ճիշտ գնահատելով դարի (դարերի) զարգացումը, դիրիժորներին/խմբավարներին՝ հետազոտելով, լսելով կարդացածը, արտաբերելով ձայնը, ձևը, չափը և այլն, իրականացնելով նվագախմբի/երգչախմբի հետ, գնահատելով տարբեր դարերի կատարողական արվեստը, լուծելով ստեղծագործելու տեխնիկական և արտահայտչական հարցերը, երաժշտագներին՝ հետազոտելով, հասկանալով կատարման խնդիրները, գնահատելով ստեղծագործությունը, տիրապետելով ստեղծագործության ճիշտ կատարումը:

Ծնունդով պոլսահայ դիրիժոր Նվարդ Անդրեասյանը 1966–1971 թթ. սովորել է Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանում, նվագախմբային և օպերային դիրիժոր Հերման Տերտերյանի մասնագիտական դասարանում: Ապա Ֆրանսիայում ուսանել է Փարիզի Երաժշտության «Նորմալ» դպրոցում՝ Պիեռ Դերվոյի մոտ՝ ստանալով նվագախմբի դիրիժորի մասնագիտացում: 1977–1980 թթ. եղել է Փարիզի Գրանդ օպերայի և Փարիզի նվագախմբի դիրիժորի օգնական: Մասնակցել է դիրիժորներ և կոմպոզիտորներ Միշել Տաբաչնիկի, Ժան Ֆուռնեի, Պետեր Էոտվյոշի, Իգոր Մարկևիչի, Դանիել Բարենբոյմի և Արթուր Օլդհեմի վարպետության դասերին: Եղել է նաև Պիեռ Դերվոյի և Պիեռ Բուլեզի ուսումնակից, հաճախել արդի երաժշտության վերլուծության դասընթացներին՝ Մաքս Դյոչի և դասական երաժշտության դասերի՝ Սերջու Չելիբիդակեի և Ռոլան Կատուարի մոտ: Մրցանակակիր է դարձել երիտասարդ դիրիժորների միջազգային մրցույթում (Բեզանսոն, Ֆրանսիա) և Յեհուդի Մենուհին հիմնադրամում (Մեծ Բրիտանիա): Եղել է Բելգիայի, Բրազիլիայի, Չինաստանի, Չեխիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Հունգարիայի, Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Նիդեռլանդների բազմաթիվ նվագախմբերի հրավիրյալ դիրիժոր: Եղել է ֆրանսիական «Պոլիքրոմի» արդի երաժշտության անսամբլի և նույնանուն փառատոնի գեղարվեստական ղեկավարը: Վարպետության դասեր է անցկացրել և դասավանդել տարբեր երկրներում (Հայաստան, Գերմանիա, Բելգիա, Նիդեռլանդներ, Բրազիլիա, Ուրուգվայ, Ռուսաստան, Թուրքիա), ձայնագրվել տարբեր ֆիրմաների և դասական ռադիոյի համար: Հայաստանում բնակվում է 2017 թվականից:

https://www.facebook.com/YerevanStateConsevatory

Նվարդ Անդրեասյան, Վաչե Շարաֆյան, ԵՊԿ ուսանողներ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

📖 В 2024 году в Ереване в издательстве «Айастан» («Гракан Айреник» ЗАО) вышла в свет книга Анны Тамироглян “Методологические принципы трактовки сонаты «Протест насилию» Эдуарда Садояна”.

Рецензенты: доктор искусствоведения, профессор Анна Асатрян; кандидат искусствоведения Лилит Артемян; редактор проф. Цогик Мхитарян.

Анна Маликоновна Талироглян (1982, Ленинакан (Гюмри). С отличием окончила ГФ ЕГК им. Комитаса (2005), аспирантуру (2008) по специальности “Фортепиано”, класс проф., засл, деятеля искусств РА Ц. Мхитарян. Лауреат ряда (21) международных, республиканских конкурсов в номинациях: фортепиано, концертмейстерское мастерство, камерный ансамбль, авторская песня. Обладатель Гран-при: Берлин (Германия), Вена (Австрия), Амстердам (Нидерланды), Лиссабон (Португалия), лауреат 1-х премий: РА, Лондон (Великобритания), Барселона (Испания), Париж (Франция), Варшава (Польша), Нью-Орлеан (США), Ватикан (Италия). Кандидат искусствоведения (тема: “Фортепиано в камерно-инструментальных произведениях армянских композиторов /2-я пол. XX века/”, рук. – доктор искусств., проф. А. Асатрян (2016). Доцент (2021). Автор ряда (более 40) опубликованных научных статей и методических работ, в том числе учебно-методического пособия “Разработка методики композиционных и интерпретационных задач в сюите “Бюракан” для фортепианного дуэта Левона Аствацатряна” (2017). Неоднократно выступает в РА и за ее пределами (Австрия, Турция, США) как солистка, концертмейстер, в камерном ансамбле.

Педагог ДМШ (с 1998), преподаватель бакалавриата и магистратуры ГФ ЕГК им.Комитаса (2005-2024). Ее воспитанники (80) лауреаты (24) конкурсов в РА, Франции, Швеции, Венгрии, Австрии.

Данное исследование посвящено выявлению концепции некоторых методологических принципов трактовки Сонаты «Протест насилию» для двух фортепиано Эдуарда Садояна. В ней впервые рассматриваются композиционные особенности, формообразующие факторы, вопросы взаимоотношения двух однотембровых инструментов, способы трансформации звучания (схемы, графики), методы расшифровки приемов исполнения на «подготовленном» фортепиано, отображающие идейный замысел Сонаты.

Факторы, характеризующие авторский стиль композитора, несомненно являются новым словом в отечественной музыке 2-й половины XX-начала XXI веков. Структура методической работы "Методологические принципы трактовки Сонаты «Протест насилию» для двух фортепиано” Эдуарда Садояна состоит из введения, четырех глав (I, II, III, IV эпизодов) с нотными примерами и схемами, которые представлены в тексте); приложения и заключения, в конце прилагается список использованной литературы.

Объектом исследования стало выявление концепции некоторых методологических принципов трактовки Сонаты в музыкальной учебно-педагогической практике, разработка разнообразных принципов композиции, в том числе, – приемов «подготовленного» фортепиано в исполнительской практике, проявление частичного обращения к симбиозу двух ветвей искусства – музыки и кино.



Многогранно творческое наследие композитора, среди его опер, балетов, симфоний, концертов, струнных квартетов, хоровых и вокально-инструментальных произведений значительное место занимают немногие по количеству, однако художественно значимые камерно-инструментальные произведения в различных сочетаниях с фортепиано, в том числе: Соната для скрипки и фортепиано (1974-1975), Соната для скрипки и фортепиано (1987), Соната для кларнета и фортепиано «Listen to te» (рукопись, 1989), Соната для двух фортепиано «Протест насилию» (рук.,1994), Соната для фортепиано и ударных «Посвящение Аршилу Горки».

Эдуард Драсталиатович Садоян (1938 – 2018) родился в Ереване. В 1969-1971г. брал уроки колпозиции в Московской консерватории им. П. И. Чайковского у Арама Хачатуряна и Сергея Баласаняна. Музыкальное образование получил в Ереванской консерватории им. Комитаса в классе А.Г.Арутюняна (1971-1976). Член Союза колпозиторов Армении (с 1979). Первоначально Эдуард Садоян окончил Институт физической культуры и защитил диссертацию на тему «Лечебная физкультура хирургии магистральных артерий» (1959). За заслуги в области педагогики и искусства (музыки) ему были присвоены ученая степень кандидата педагогических наук (1976), почетное звание заслуженного деятеля искусств Армении (2013).

Учитывая образно-смысловой подтекст уже в названии, предпринимается попытка изучения Сонаты для двух фортепиано посредством сонористических приемов «подготовленного» фортепиано, до сих пор не исследованного. При этом, Соната отличается необычностью как по построению, так и интонационному складу изложения в жанре камерного ансамбля – фортепианного дуэта, а, следовательно, обусловлено индивидуальным подходом к анализу концептуально – методологических и композиционных принципов в музыкальной учебно-педагогической и исполнительской практике.

Эдуард Садоян в Сонате широко пользуется элементами виртуозности «пианизма» и, в большинстве случаев, приемами современной техники «подготовленного» фортепиано. Однако они не являются самоцелью и направлены на раскрытие основной идеи – выражение гневного протеста против варварства, национальной вражды, человеконенавистничества, коренящегося в их вероисповедании.

Жанр Сонаты дал композитору возможность наиболее полного воплощения программного замысла, где каждая цифра к отдельным фактурным отрезкам непосредственно связана как с содержанием, так и изменением отдельных сценических положений, отражающих, по сути, различные психологические состояния образов в различных драматических ситуациях.

Программность раскрывается в последовательном монтаже как в кино принципом «цепного» действия (спиралеобразным витком) оригинального сопряжения отдельных законченных микросюжетов. Причем каждый из эпизодов представлен одномоментно, как быстротечный миг времени, как установление единого образного действия, либо вытекающих из него характерных трансформаций.

По сути, это одночастное сочинение сонорного типа, сконструированное в свободно импровизационной форме. Актуальность этой темы проявляется в том, что это оригинальное сочинение, в основном построенное на приемах «подготовленного» фортепиано, до сих пор не исследовано.

Цель и задачи исследования: попытка разработать приемы игры на «подготовленном» фортепиано, раскрыть некоторые методические принципы интерпретации (трактовки) фактурных и других выразительных средств, ансамблевого соотношения двух однотембровых инструментов, использование приемов для звукового преобразования (извлечения лапидарного звучания), расшифровки техники изложений и т.д. В конечном итоге, все это способствует формированию основ идейного замысла Сонаты.

Это учебно – методическое пособие имеет целью воспитание культуры дуэтного исполнения, в частности, на двух фортепиано как в учебно-педагогической, так и исполнительской практике на примере современной авангардной музыки 2-й половины XX века.

Учитывая сложность концепции рассматриваемого произведения, требующего ознакомления со специфическими методами трактовки приемов «подготовленного» фортепиано» (владения определенными навыками звукоизвлечения и технической подготовленности), Соната может быть включена в учебно-педагогический репертуар как музыкантов- исполнителвй, так студентов высших и средних учебных заведений.

СОФА АЗНАУРЯН
колпозитор, редактор “Издательство ЕГК”

ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Վկայական N 03Ա059505 տրված 7.04.2003թ.

ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐ՝ Կոմիտասի անվ. ԵՊԿ ՊՈԱԿ
ՍԵՐԳԵՅ ՍԱՐԱՔՅԱՆ, ԳՈՀԱՐ ՇԱԳՈՅԱՆ
Գլխավոր խմբագիր՝ ԱՐՄԻՆԵ ԱԹՈՅԱՆ
Թողարկման պատասխանատու՝ ԳՈՀԱՐ ՇԱԳՈՅԱՆ
Խմբագիրներ՝ ԳՈՀԱՐ ՇԱԳՈՅԱՆ (հայ. լեզու)
ՍՈՖԻԱ ԱԶՆԱՈՒՐՅԱՆ (ռուս. լեզու)
Գեղարվեստական խմբագիր՝
ԳՈՀԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Մեր կայքում տեղ գտած հրապարակումների հեղինակային իրավունքը պատկանում է բացառապես «Երաժիշտ» ամսաթերթի «ԵՊԿ հրատարակչությանը» (http://yksclabrary.am/ conservatory.am): Այլ ՋԼՄ-ներում սույն կայքի հրապարակումներից որևէ մեկը ամբողջական վերահրապարակելու համար անհրաժեշտ է «ԵՊԿ հրատարակչության» (http://yksclabrary.am/ conservatory.am) համաձայնությունը: Լրատվամիջոցները կարող են «Երաժիշտ» ամսաթերթից մեջբերումներ վերահրապարակել միմիայն հատվածաբար՝ պարտադիր օգտագործելով հիպերհղում:

Արտատպումը միայն «Երաժիշտ» ամսաթերթի գրավոր արտոնությամբ: Խմբագրությունը միշտ չէ, որ համամիտ է հեղինակների կարծիքներին կամ տեսակետներին:
Նյութերը չեն գրախոսվում և չեն վերադարձվում:

Ծավալը 8 էջ: Ստորագրված է 27.10. 2024:
Գինը 200 դրամ: Տպաքանակը՝ 101:

Գովազդի տեղադրման համար դիմել խմբագրություն նշված հասցեով.

0001, ք. Երևան, Մարկ Գրիգորյան 2
+374 10 52 39 93+118
+ 374 55 00 21 62
http://www.conservatory.am, http://yksclabrary.am/
E-mail: yerazhisht@gmail.com
https://www.facebook.com/Yerazhisht-newspaper-Yerevan-State-Conservatory-996490150508214/